1597–8. Թվ. ՌԽԶ. Թագաւորն Զիկմունդ Էլչի ղրկեց ի Թուրքի խոնարհքարն՝ զոմն իշխան, որ կոչի Կուլաքիյ, որ էր Պարին (Bar ի Մայելիւ) սդարոսդայ. զոր և գնաց մեծ փարթամութեամբ. և ընդ նմա բազում իշխանաց որդիք վաճառականք, զոր ոմանք ասէին եթէ 80 արապայ էր, զամէն կարմիր չուխայով ծածկած. և անցին գնացին քաղքիս գոլով? և մտան ի Օլախաց երկիր, և գնացին ի Սեչով, ուր Օլախաց պարոն էր Երեմիայն։ Եւ իբրեւ հանդիպեցաւ՝ մեծաւ սիրով ընկալաւ զնա և յոյժ պատուեաց զնա մեծամեծ պարգեւաք և տրաք. և ոչ եթող զնալ մինչեւ շաբաթ մի. զոր ուրախացեալք ի միասին ուտելով և ըմպելով, և ազգի ազգի երգովք և թըմբկովք և նուագարանաք. և ապա արձակեաց. որ և գնաց։ Եւ հրամայեաց պարոն Երեմիայ որ ամէն օր հինգական եալովիցայ և երեսնական ոչխար տան, մինչեւ ի Տունան (Դանուբ)։ Այսքան է առ այս։

1598–9. Թվ. ՌԽԷ. Թագաւորին Զիկմունդին թագուհին վաղճանեցաւ ի վերայ տղին ծնանելն. եօթն ամ եկաց ի հետ թագաւորին իւրոյ։ Աստուած ողորմի իւր հոգուն։

1598–9. Թվ. ՌԽԷ. Մեծ գետյարուց եղաւ և բազում վնաս արաւ և շատ պակասութիւն. զիրաղաչքներն աւերեց, զի հաց անկամ ոչ գտանէին և վաճառականք. նա և զքաղքին դրունսն կոտորեց և զմարդիկ ընկղմեց. զոր ոմանք ասացին, եթէ բազում անկամ մեծ գետյարուցներ տեսել եմք, բայց այսպէս մեծ և անհուն չէաք տեսեալ։ Բայց այս ամենայն եղեւ վասն մեղաց մերոց. զի ժամանակս դառնացեալ է, և մարդիքն դժարացեալ են և զԱստուած մոռացել են, և յագահութիւն անկել են, և արծաթասիրութիւնք զիրեանք պատել են. և յամենայն ինչ մէկ քին (գին) հինգ վեց քին եղել է, եթէ հաց և եթէ միս, եթէ ըմպելի և ամենայն ցեղ կերակուր. մէկ չարեկ միս՝ եթէ եզի և եթէ կովու՝ չորս մաճրի եղել է, զոր յառաջ 20 սպիտակ կ'առնուաք ու թանկ կու հաշուէաք. և մէկ ոչխարի չարէկ՝ 15 սպիտակ եղել է, զոր յառաջ 3 սպիտակ էր։ Բայց այս եղեւ անիրաւ մարդկանէ, որ զԱստուած մոռացել են և զհոգիս իւրեանց արհամարհել են, և զԱստուծոյ տուրքն ոչ ինչ համարել են։

1598–9. Թվ. ՌԽԷ. Եկաւ Տէր Մելքիսեդ կաթողիկոս ի Նուիրակութիւն։ և ունէր ընդ իւր երեք եպիսկոպոսք և մէկ աբեղա. և կացին ի Կամենից ոչինչ բազում ժամանակ, և գնացին Իլով. և բազում ինչ ժողովեցին, և ելին գնացին։ Այսքան առ այս։

1600–1. Թվ. ՌԽԹ. Մինդանի պարոն որ կոչի Միհալ, ի հետ Օլախի պարոնին Երեմիային թշնամիք եղեն, և զօրաք բազմաք եկն ի վերայ Օլախի պարոնին. և զերկիրն ընդ ձեռամբ իւրով էառ, և բազում վնաս արար, և զՕլախի պարոն փախստական արար. և նա եկեալ Իլախի պարոնաց, այսինքն Վոյվոտային՝ որ կոչի Կուլաքիյ, որ նմա օգնական լինի և կռիւ տայ